ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ Է ՀՂԵԼ ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բաղդադի Սայիդաթ ալ-Նայյաթ Ասորական Կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցած ահաբեկչական գործողության հետեւանքով զոհված 58 անմեղ զոհերի եւ Ասորական Կաթոլիկ (Քաղդեական) եկեղեցու անդամների սպանության կապակցությամբ նոյեմբերի 1-ին ցավակցական նամակ է հղել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ պապին:

Նորին Սրբության նամակում մասնավորապես ասված է. «Դիմելով Իրաքի իշխանություններին քրիստոնեական փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունն ապահովելու կոչով՝ միաժամանակ խստորեն դատապարտում ենք այս անթույլատրելի արարքը, որը միջկրոնական ատելություն բորբոքելու կանխամտածված քայլ է այնպիսի մի երկրում, որտեղ մահմեդականներն ու քրիստոնյաները դարեր շարունակ ապրել են սիրո եւ խաղաղության մեջ: Խորապես ցավակցում ենք Ձերդ Սրբությանը, Իրաքի Ասորական Կաթոլիկ (Քաղդեական) եկեղեցու Պատրիարքին, եկեղեցականներին ու հավատավոր ժողովրդին եւ աղոթում առ Ամենողորմածն Աստված, որպեսզի Իր սիրով եւ ողորմությամբ Աստծո արքայության մեջ ընդունի անմեղ զոհերի հոգիները»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԷ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարքն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին առեւտրի նախարար Շեյխա Լուբնա ալ-Քասիմիի գլխավորած պատվիրակությանը՝ ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Վահագն Մելիքյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց տիկին նախարարին եւ պատվիրակության անդամներին՝ ուրախություն հայտնելով Հայաստանի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների միջեւ խորացող ջերմ ու եղբայրական հարաբերությունների, երկու ժողովուրդների բարեկամական կապերի առնչությամբ:

Վեհափառ Հայրապետն իր ջերմ ողջույնները փոխանցեց նաեւ Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժայի կառավարիչ Շեյխ Սուլթան բին Մուհամմադ Ալ Քասեմիին, որի